

Երևան, 6 հոկտեմբերի, 2016 թ.

Կրթական միջոցառումներ «Այբ»-ի 10-ամյակի շրջանակում

Մամուլի հաղորդագրություն

Այս տարի «Այբ» կրթական հիմնադրամը նշում է Հայաստանի կրթական ոլորտում իր գործունեության **10-ամյակը**, որի շրջանակում կանցկացվեն մի շարք կրթական միջոցառումներ:

Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 17:00-ից, «Գաֆեսնյան» քանդակների այգում (Կասկադ) տեղադրված տաղավար-դասասենյակում կանցկացվեն կարճատև դասընթացներ ու գիտափորձեր:

Իսկ **18:30-ից** կսկսվի համերգային ծրագիր, որն անցկացվելու է ոչ սովորական համերգ-սեմինարի ձևաչափով: Ելույթով հանդես կգան «Այբ» դպրոցի երգչախումբը, «Battle of Evermore» ռոք խումբը և «ԱյԲար» խումբը:

Ի թիվս այլ տոնական միջոցառումների՝ **հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ից 14:00-ն**, «Այբ» **դպրոցում** կանցկացվեն վարպետության դասեր, որոնք կվարեն «Այբ» ակումբի անդամներ, համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետներ **Դավիթ Յանը** (SS ոլորտի հայտնի գործարար և առաջատար փորձագետ, ABBYY ընկերության հիմնադիր և տնօրենների խորհրդի անդամ, «iiko» ընկերության համահիմնադիր և տնօրենների խորհրդի նախագահ, «Findo» ընկերության համահիմնադիր և նախագահ, ԱՄՆ), **Ռուբեն Հարությունյանը** (գործարար, «Henderson» ընկերությունների խմբի հիմնադիր և գլխավոր տնօրեն, ՌԴ) և **Արամ Փախչանյանը** (ABBYY ընկերության փոխնախագահ, «Այբ» դպրոցի տնօրեն, ՀՀ):

Վարպետության դասերի թեմաներն են .

- Դավիթ Յան. «Կարո՞ղ է արդյոք համակարգիչը ստեղծագործել: Արիեստական բանականություն, խոր նեյրոնային ցանցեր»

- Բուբեն Հարությունյան. «Հաջողակ բիզնեսի գաղտնիքը. ո՞րն է ավելի կարևոր՝ մարդի՞կ, թե՞ գործընթացները»
- Արամ Փախչանյան. «Կրթության մարտահրավերները. ինչ է մեզ սպասում ապագայում»

Վարպետության դասերը նախատեսված են սկսնակ ձեռներեցների, ուսանողների և SS ոլորտի մասնագետների համար:

Սիրով հրավիրում ենք լուսաբանելու միջոցառումները:

Վարպետության դասերի մեկնարկից կես ժամ առաջ՝ ժամը 10: 30-ին, բանախոսները կպատասխանեն լրագրողների հարցերին:

«Այբ» կրթական հիմնադրամի մասին

«Այբ» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2006 թվականին մի խումբ գաղափարակիցների կողմից՝ Հայաստանում կրթության նոր մշակույթ ձևավորելու և երկրում կրթության ոլորտի զարգացմանը համակարգված ներդրումներով աջակցելու նպատակով: Իր գործունեության 10 տարիների ընթացքում «Այբ» հիմնադրամը մշակել և իրագործել է կրթական բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրեր, որոնցից կարևորագույնն ու խոշորածավալը «Այբ» դպրոցն է: Մյուս կարևորագույն ծրագրերից են Կրթության գերազանցության ազգային ծրագիրը՝ «Արարատյան բակավարիատ» նոր կրթական ծրագրով, սիրված ու հայտնի միջազգային դպրոցական մրցույթները («Կենդանու մաթեմատիկան բոլորի համար», «Ռուսական առջուկ. լեզվաբանությունը բոլորի համար», «Մեղու. հայերենը բոլորի համար» և այլն):

«Այբ»-ի վարպետության դասերի մասին

2009 թվականից սկսած՝ «Այբ» կրթական հիմնադրամը պարբերաբար կազմակերպում է վարպետության դասեր, որոնց շրջանակում Հայաստան են գալիս աշխարհահռչակ ու հաջողակ մասնագետներ և հայ լսարանին հաղորդակից դարձնում իրենց անձնական փորձին՝ իրենց օրինակով ցույց տալով, թե ինչպես կարելի է հաջողության հասնել այս կամ այն ոլորտում: Այդ դասերը նպատակ ունեն հաջողության տարբեր պատմությունների միջոցով երիտասարդներին սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ հավատ ներշնչելու և խորհուրդներով ու առաջարկություններով օգնելու: